

Արդյո՞ք օգտվում եք «TTC»-ից կամ «Wheel-Trans»-ից:



«Fair Pass» տարանցիկ զեղչը կարող է խնայել 1.10 դոլար միանգամյա ուղևորատոմսի և 32.75 դոլար՝ ամսական ուղևորատոմսի դեպքում:



Ով կարող է օգտնվել «Fair Pass» զեղչից:

Հետևյալ պայմաններին համապատասխանող բնակիչները՝

- Ապրում են Տորոնտոյում
- 20-ից 64 տարեկան են
- Ստանում են աջակցություն հետևյալ ծրագրերից որևէ մեկից՝
 - Օնտարիո նահանգի աղքատության նպաստ (Ontario Works (OW))
 - Հաշմանդամների օժանդակության Օնտարիոյի ծրագիրը (Ontario Disability Support Program (ODSP))
 - Տորոնտոյի երեխաների օժանդակության ծառայության կողմից տրամադրվող երեխայի խնամքի վարձավճարի սուբսիդավորում (Child Care Fee Subsidy provided by Toronto Children's Services)
 - Բնակվարձի սուբսիդավորում (Rent-Geared-to-Income Subsidy (RGI))



Ի՞նչ է անհրաժեշտ դիմելու համար:

1. Ձեր «PRESTO» քարտի համարը:
2. Ապացույց, որ օգտվում եք վերոգրյալ ծրագրերից՝
 - Հաճախորդի անձնական համար՝ տրամադրված հետևյալ ծրագրերից՝ OW, ODSP, Child Care Fee Subsidy, կամ
 - Վարձատուի կողմից RGI-ի որոշման կայացման ծանուցագիրը (կամ այլ համարժեք փաստաթուղթ)



Այժմ դիմել՝ toronto.ca/transitdiscount

Օժանդակության համար զանգահարեք՝ Դիմումների և օժանդակության կենտրոն հետևյալ հեռախոսահամարով՝ 416-338-8888.



Մենք խոսում ենք Ձեր լեզվով:

Առկա են թարգմանություններ (առցանց) և տրամադրվում է թարգմանչի ծառայություն (հեռախոսով):



Չունե՞ք «PRESTO» քարտ:

Ստացե՛ք քարտն անվճար Տորոնտոյի հանրային գրադարանի որոշ մասնաճյուղերում: Մանրամասների համար այցելեք՝ torontopubliclibrary.ca/presto

